

«Հայոց եկեղեցու պատմություն» - 2018
11-րդ դասարան

№ 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Ո՞վ է դարձել Աղվանքի առաջին կաթողիկոս.** (0,5 միավոր)
 - 1) Հովակիմ Եպիսկոպոսը
 - 2) Աբրահամ Եպիսկոպոսը
 - 3) Աբաս Եպիսկոպոսը
 - 4) Դավիթ Եպիսկոպոսը

2. **Թվարկվածներից ի՞նչ իրողություն չի մարնանշում մկրտության ավագանը.** (0,5 միավոր)
 - 1) ջրհեղեղ
 - 2) Կարմիր ծով
 - 3) Տիրոջ լուծ
 - 4) Մայր եկեղեցու արգանդ

3. **Ի՞նչ գրաբեսակով է գրված Կոմիտաս հայրապետի՝ Ս. Հռիփսիմե եկեղեցու արձանագրությունը.** (0,5 միավոր)
 - 1) բոլորագիր
 - 2) երկաթագիր
 - 3) վիմագիր
 - 4) գաղափարագիր

4. **Հայ-մոնղոլական բարեկամական հարաբերություններն ավելի ամրապնդելու համար ի՞նչ էր առաջարկում Հեթում արքան Մանգու խանին.** (0,5 միավոր)
 - 1) մկրտվել և դառնալ քրիստոնյա
 - 2) իր դստերը ամուսնացնել Մանգու խանի որդու հետ
 - 3) Կիլիկիայի սահմանամերձ շրջաններում մոնղոլական բանակի զինվորների համար հիմնել բնակավայրեր
 - 4) Իր որդուն ամուսնացնել Մանգու խանի քրոջ հետ

№ 5-8

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

5. **1789 թ. Հովսեփ արք. Արղությանը և Հովհ. Լազարյանը ոուսական կառավարությանը ներկայացրին մի հիշատակագիր, որի մեջ հայոց դրոշի գույները ներկայացնում էին**

կարմիրը, կանաչը, կապույտը՝ ----- նշանով: (1 միավոր)

6. ----- կեռիսաչը հին հայերի համար հավերժության խորհրդանիշն էր. դրանց պատկերներ հանդիպում են անգամ հնագույն ժայռապատկերներում: (1 միավոր)

7. Ըստ ----- պատմությունն ունի վեց հիմնական տարր՝ դեմք (անձ), ժամանակ, տեղ, (տարածք), իր, եղանակ, պատճառ: (1 միավոր)

8. ----- գրել է. «Հայոց եկեղեցին ազգային եկեղեցի է գերազանցապես իր հոփն ամբողջովին հայերից կազմված, իր լեզվով, գրականությամբ, արվեստով, ժամերգությամբ ու հոգևոր կյանքով, բնականաբար՝ նաև անցյալով և պատմությամբ շաղկապված հայ ժողովրդի հետ»: (1 միավոր)

№ 9-10

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

9. **Վանքի անունը համապատասխանեցնել գավառի անվանը.** (1 միավոր)

- | | |
|----------------------|-----------------|
| 1. Ռշտունյաց գավառ | ա) Հնձուց վանք |
| 2. Վայոց ձոր | բ) Հոռոմոս |
| 3. Կարնո գավառ | գ) Նարեկավանք |
| 4. Կայեն գավառ | դ) Կամրջաձոր |
| 5. Արշարունյաց գավառ | ե) Հովհաննավանք |
| 6. Շիրակ | զ) Ցախաց քար |
| | է) Գեփիկի վանք |

1	
2	
3	
4	
5	
6	

10. **Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել իրենց հետ կապ ունեցող իրադարձություններին.**

(1 միավոր)

- Ներսես Աշտարակեցի
- Մկրտիչ Ա Խրիմյան
- Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի
- Հովհաննես Ը Կարբեցի
- Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի
- Եփրեմ Ա Ձորագեղցի

1	
2	
3	
4	
5	
6	

- ա) Նրա հանձնարարությամբ կազմվել և Թիֆլիսում հրատարակվել է Մայր Աթոռի Մարենադարան-ձեռագրատան ձեռագրերի ցուցակը:
- բ) Նա Նիկոլայ I կայսեր կողմից պարգևատրվել է ուսական բարձրագույն շքանշանով:
- գ) Նա վերականգնել է Էջմիածնի կաթողիկոսության իրավունքը Ռուսաստանի հայոց թեմի նկատմամբ:
- դ) Ալեքսանդր I-ին կայսրը նրան նվիրել է վեղարի ադամանդակուռ խաչ:
- ե) Նրա նախաձեռնությամբ Էջմիածնում ստեղծված ուսումնական հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկել յուրաքանչյուր գյուղում դպրոց բացելու ուղղությամբ և հրապարակվել են հայկական ծխական դպրոցների առաջին ընդհանուր կանոնները:
- զ) Նրա հանձնարարությամբ վերանորոգվել են Ս. Հռիփսիմեի, Խոր վիրապի, Հաղպատի, Սանահինի, Սևանի վանքերը, հիմնադրվել Ամերիկայի առաջնորդական թեմը:
- է) Նրա գահակալության օրոք Նիկոլայ I-ը հյուրընկալվել է Էջմիածնում:

№ 11

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

11. Ամենայն Հայոց Կաթողիկոսության աթոռանիստերի անունները դասավորել ըստ դրանց աթոռանիստ դառնալու հաջորդականության. (1 միավոր)

- ա) Հռոմկլա
- բ) Դվին
- գ) Արգինա
- դ) Սիս
- ե) Անի
- զ) Աղթամար
- է) Ծովք
- ը) Շուղրի (Քեսունի) Կարմիր վանք

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	

№ 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

12. «Քրիստոնեությունը ԱՂ եղավ մեր ժողովրդի հոգեկան կյանքի համար: Եվ Հայաստանյազ եկեղեցին հանդիսացավ ԱՂԱՄԱՆԸ»:

Ո՞վ է հերկյալ խոսքերի հեղինակը: (1 միավոր)

13. «Մանավանդ ազգս Հայկազյան մեղքերի պարճառով անարժան դարձած և օտարացած մեղքերի հողմով փռշու պես ցանուցիր եղած երկրի երեսին՝ օտարասեռ ազգերի և ցեղերի մեջ: Հայցում ենք ամենախնամ և ամենագութ Արարչից, որպեսզի

կտրվածը դարձյալ բժշկի և հոգու գրգանքով իբրև թռչունը, որ ձագերին իր թևերի փակ է ժողովում - իր ամրածածուկ աջով վերստին հավաքելով հայերին նրանց վիճակված սեփական բնիկ և հայրենի երկրի ու գավառների մեջ, վերանորոգի այնպես, ինչպես սրեղծել էր ամենասկզբում՝ պանծալի փառքով և բարգավաճող արդյունքով: Ուժ փա, կազդուրի և հասարակարհիմն դարձնի թագավորական ու հոգևոր ինքնիշխանությամբ և ամեն րեսակ բարիքներով»:

1. Ո՞վ է մեջբերված աղոթքի հեղինակը: (1 միավոր)

2. Հայոց եկեղեցու ո՞ր դարերի գաղափարախոսությունն է ներառում հետևյալ աղոթքը: (1 միավոր)

№ 14-15

Տերմինների, հասկացությունների, պարճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանք

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ: (0,5 միավոր)

Մատթեոս, Հովհաննես, Պետրոս, Բարդուղիմեոս, Թադեոս, Մարկոս

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ: (0,5 միավոր)

Եսայի Նշեցի, Ա.Հովհան Որոտնեցի, Ա.Գրիգոր Տաթևացի, Մատթեոս Զուղայեցի, Առաքել Այունի, Ոսկան Երևանցի

15/1. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը, ավելացնել փոյալ շարքին համապարասխանող ևս մեկ անվանում:

(1 միավոր)

ա. Համբարձման փոն, Տյառնընդառաջ ...

բ. Սուրբ Ծնունդ, Տյառնընդառաջ ...

գ. Տյառնընդառաջ, Պայծառակերպության փոն ...

15/2. **Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված:**

(1 միավոր)

- ա. Օրբեյաններ, Պոռոշյաններ, Վաչուրյաններ
 - բ. Օրբեյաններ, Ռուբինյաններ, Վաչուրյաններ
 - գ. Օրբեյաններ, Պոռոշյաններ, Հեթումյաններ
-
-

15/3. **Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը, ավելացնել փոխառյալ շարքին համապատասխանող ևս մեկ անվանում:**

(1 միավոր)

- ա. Արարադյան թեմ, Ղարաբաղի թեմ, Արրպատականի թեմ, Շիրվանի թեմ, Բեսարաբիայի-Նոր Նախիջևանի թեմ, ...
 - բ. Երևանի թեմ, Ղարաբաղի թեմ, Վրաստանի-Իմերեթիայի թեմ, Շիրվանի թեմ, Բեսարաբիայի-Նոր Նախիջևանի թեմ, ...
 - գ. Երևանի թեմ, Ղրիմի թեմ, Վրաստանի-Իմերեթիայի թեմ, Շիրակի, թեմ Բեսարաբիայի-Նոր Նախիջևանի թեմ, ...
-
-

№ 16

Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից

(0,5 X 4 = 2 միավոր)

16. ա. Ովքե՞ր են պատկերված:

բ. Գրել նրանց գահակալման տարիները:



1.



2.



3.



4.

1. ա _____ բ _____
2. ա _____ բ _____
3. ա _____ բ _____
4. ա _____ բ _____

17. Շարադրանք (2 միավոր)

1. Նկարագրե՛ք հայկական եկեղեցիների արտաքին տեսքը և ներքին կառուցվածքը:
2. Ի՞նչ գիտեք հայ զինվորականության պատվո վարքականոնի մասին, որո՞նք են այդ վարքականոնի ութ գլխավոր պահանջները:
3. Թվարկե՛ք յոթ մարդկային առաքինությունները և յոթ մոլությունները, որո՞նք են դրանցից մեծագույնները:
4. Ի՞նչ է անդաստանը: Ինչպե՞ս է կատարվում անդաստանի արարողությունը:

Վարդան Եպիսկոպոս Նավասարդյան
Հայոց եկեղեցու պատմության հանձնաժողովի նախագահ,
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ՔԴԿ-ի տնօրեն